




Հայաստանեայց Եկեղեցույ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի
ամսաթերթ

Յունիս 2006

ԺԳ տարի թիւ 10

Մ
Կ
Շ
Տ
Ո
Ս
Ծ
Ի
Կ
Ր
Ձ
Ա
Գ
Ա
Ն
Գ



*Էջմիածին, հոն ուր իջաւ Տիրոջ միածին որդին, Գրիգոր Լուսաւորչին
նշելով այն տեղը ուր պիտի կառուցուէր առաջին հայկական եկեղեցին:
Այս տարի, Հայաստանեայց եկեղեցին Էջմիածնի տօնը կը յիշատակէ
Յունիս 18-ին:*

Այս թիւով...

Ամառնային եկեղեցական տօնացոյց: Էջ 2

Հայաստանեայց եկեղեցին, Յունիս 12-ին կը յիշատակէ տօնը
Հովիտիմեանց կոյսերուն, որոնց նահատակութեան յիշատակումը կը
կատարուի իբր քրիստոնէական հաւատքի վերահաստատման, զայն
տարածելու ու անխախտ պահելու առիթ: Էջ 3

Հնաւանդ գեղեցիկ այլեւ բարոյալից սովորութիւն էր հայ ժողովուրդի
մէջ, որ երբ բերքը կը հասնի, երախայրիքը՝ հասունցած առաջին եւ լաւագոյն
բաժինը, իբրեւ շնորհակալիք եւ երախտագիտութիւն առ Աստուած, տալ
Աստուծոյ: Էջ 4

Պայծառակերպութեան տօնը կը վերաբերի, ամէն տնօրինական
տօներու նման, Յիսուսի կեանքէն յատուկ դրուագի մը, Անոր փառաւոր ու
լուսաւոր կերպով երեւնալուն իր առաքեալներէն երեքին: Էջ 5

Աստուածաշունչը փոքրիկներուն համար Էջ 6-8

Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 9

Կարճ լուրեր: Էջ 10

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Խմբագիր՝

Շաղիկ Պոյաճեան

Աշխատակիցներ՝

Յասմիկ Նաճարեան

Երան Լոշխաճեան

Գարոլ Մանուկեան

Թամար Գիզիրեան

Շողիկ Նաճարեան

Նիկոլ Դանիէլեան

Թորոս Պապիկեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ-ը

կը գտնուի նաեւ համացանցի

(internet) վրայ: Այցելեցէ՛ք

www.sourphagop.org, ձախ

կողմի կոճակներէն

«Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղէ

դէպի ներկայ եւ նախկին

թիւերը...

Հ ա յ ա ս տ ա ն ե ա յ ց

Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոցի

կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝

Սալբի Բագլաեան

Վերժին Գէլթաճեան

Յասմիկ Նաճարեան

Երան Լոշխաճեան

Գարոլ Մանուկեան

Վերա Կարապետեան

Թամար Գիզիրեան

Շողիկ Նաճարեան

Աշխէն Իշխանեան

Յասմիկ Գանաճեան

Տնօրէն՝

Թորոս Պապիկեան

Լուսանկարիչ՝

Նիկոլ Դանիէլեան

Պարբերաթերթ՝

Շաղիկ Պոյաճեան

Ամսական տօնացոյց

Յունիս 2006

Յունիս 11: Յիշատակ Եղիա մարգարէի

Յունիս 12: Սուրբ Հռիփսիմեանց կոյսեր

Յունիս 13: Սրբոց Գայանեայց կոյսեր

Յունիս 17: Ս. Գրիգոր Լուսաւորչի ելն ի Վիրապէն

Յունիս 18: Տօն Սուրբ Էջմիածնի

Յունիս 24: Ս. Ներսէս Պարթեւ Կաթողիկոս

Յուլիս 2006

Յուլիս 1: Գիտ նշխարած Սուրբ Գրիգոր Լուսաւորչի

Յուլիս 8: Ս. Տրդատ թագաւոր եւ Աշխէն թագունի

Յուլիս 15: Տասներկու առաքեալներ Քրիստոսի եւ

Պօղոս տասներեքերորդ առաքեալ

Յուլիս 23: Պայծառակերպութիւն-Վարդավառ

Յուլիս 24: Յիշատակ մեռելոց

Յուլիս 27: Սուրբ Եսայի մարգարէ

Յուլիս 29: Ս. Թադէոս առաքեալ եւ Ս. Սանդուխտ

կոյս

Օգոստոս 2006

Օգոստոս 5: Եփեսոսի սուրբ ժողովի 200

հաշրապետացն

Օգոստոս 12: Տօն Շողակաթի Սուրբ Էջմիածնի

Օգոստոս 13: Վերափոխումն Սուրբ Աստուածածնի

Օգոստոս 14: Յիշատակ մեռելոց

Օգոստոս 22: Սուրբ Յովակիմ եւ Աննա՝ ծնողք

Սուրբ Աստուածածնի

Սուրբ Հռիփսիմեանց շարական Անձինք նուիրեալք Կոմիտաս Աղցեցի

Հայաստանեայց եկեղեցին, այս Յունիս 12-ին կը յիշատակէ տօնը Հռիփսիմեանց կոյսերուն, որոնց նահատակութեան յիշատակումը կը կատարուի իբր քրիստոնէական հ ա լ ա տ ք ի վերահաստատման, զայն տարածելու ու անխախտ պահելու առիթ:

Սուրբ Հռիփսիմեանց կոյսերուն նուիրուած ծանօթ շարականն է «Անձինք Նուիրեալք»: Ան յօրինումն է Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսին, 615-628 թուականներուն: Այս շ ա Ր ա կ ա ն ի իւրայատկութիւնն է որ դասաւորուած է հայերէն այբուբենի 36 տարերու յաջորդականութեամբ. այսինքն, անոր տուներէն իւրաքանչիւրը կը սկսի մեր այբուբենի գիրերէն ի լ Ր ա ք ա ն չ ի Ր ո վ ` հերթաբար: Այս շարականը կը նկատուի մեր հոգեւոր բանաստեղծութեան ամենագեղեցիկ նմուշներէն մէկը: Ահա անկէ յատուած մը.-

Անձինք նուիրեալք
(Ս. Հռիփսիմեանց շարական)
Օրհ. ԳԿ (դրձ.) Կոմիտաս Աղցեցի

Ան - ձինք նը - լի - բալք սի - բոյն
Գրիս - տո - սի. երկ - նա - տը նա - հա - տակի
եւ կու - սակի ի - մաս - տունք. ի պար - ծա -
նըս ձեր ձեր բար - ձրա - ցեալ տօ - նէ
մայր Սի - ովն դըս - տե - բօ - լըն իւ - բով:

Բարբառք երկնաւորք լցին զերկիր, Բանգի հոտ անուշից բուրեցայք ի Գրիստոս, ողջակէզք բանաւորք եւ զոհի փրկութեան եւ որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ:

Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ յիմարեցոյց զբազաւորն, եւ պակեան հեբանոսք. ի զեղ սխանչելի աստուածատուր կուսանացն տարփացեալ զուարբունքն ընդ մարդկան տօնեցին:

Դարձեալ վերստին արարչագործ գօրութիւն եւ դարձեալ եղեմ աստուածատունկ զարդարի, Բանգի ծառն կենաց տնկեցաւ ի դրախտին՝ բերելով մեզ պտուղ զերանելին Հռիփսիմէ:

Գիտէի՞ր թէ...

«Անձինք Նուիրեալք»-ի հետեւողականութեամբ է որ յետագային, այբուբենի յաջորդականութեամբ յօրինուած բոլոր շարականները կոչուեցան «Անձինք»: Սուրբ Ներսէս Շնորհալին յօրինած է «Անձինք» կոչուող Հինգ շարականներ: «Անձինք»ներ յօրինած են նաեւ Յովհան Երզնկացին, Գրիգոր Սկեւոացին եւ Կիրակոս Երզնկացին:

Նայէ երկինքէն, տես վիճակը որթատունկիդ...

Վերափոխումն Սուրբ Աստուածածնի

«Վերափոխում» բառը, գրաբար լեզուով նկատի առնուած, կը նշանակէ վեր, դէպի երկինք փոխադրուիլ: Իսկապէս ալ, Վերափոխումը Սուրբ Աստուածածնի մահուան յիշատակումն է, որ կը կատարուի Օգոստոս 15-ին մերձակալ, այսինքն Օգոստոս 12-էն մինչեւ 18 հանդիպող Կիրակին:

Վերափոխումը Հայաստանեայց եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մէկն է: Այս տօնի առթիւ մեր եկեղեցին կը նշէ «Քրիստոսի գալուստն ի փոխումն մօրն եւ կուսի»: Այլ խօսքով, տօնը կ'ակնարկէ այն պատահարին ըստ որուն Քրիստոս ինքն իջաւ իր մօր մահուան առթիւ եւ զինք փոխադրեց երկինք:

Վերափոխումի անհղութիւններէն՝ Խաղողօրհնէք

«Հնաւանդ գեղեցիկ այլեւ բարոյալից սովորութիւն էր հալ ժողովուրդի մէջ, որ երբ բերքը կը հասնի, երախայրիքը՝ հասունցած առաջին եւ լաւագոյն բաժինը, իբրեւ շնորհակալիք եւ երախտագիտութիւն առ Աստուած, տալ Աստուծոյ: Եթէ նախաքրիստոնէական շրջանին այս բարոյալից սովորութիւնը կար, եւ ան կը մատուցուէր աստուածներուն ապա պահուեցաւ գաղափարը եւ շարունակուեցաւ այդ ընծայաբերումը, մէկ տարբերութեամբ. այս անգամ՝ եկեղեցիին եւ անոր միջոցաւ ուր որ անհրաժեշտութիւն է:

Խաղողը բոլոր պտուղներուն մէջ նախապատիւ է, որովհետեւ անկէ կը պատրաստուի Գինին որ Ս. Պատարագի, Ս. Հաղորդութեան, Ս. Պսակի խորհուրդներուն մէջ խորհրդանշական գործածութեան կը դրուի:»

(Աւանդապատում)

Սուրբ Աստուածածին եւ իգական անուններ

Սուրբ Աստուածածնի տիպարին ու անոր նկարագրի բարոյական կատարելութեան հետեւողութեամբ, գոյութիւն ունի հայկական իգական անուններու երկար շարան մը, որոնց տէրերը կ'արժանանան անուանակոչման տօնախմբումներու իրենց ընտանիքներէն ներս: Ահա այս անուններու շարքէն հետաքրքրական մի քանի օրինակներ.-

Մարիամ, Մարի, Մարինէ, Մարօ, Մայրանոյշ, Սուրբ Աստուածածնի անուան հետեւողութեամբ:

Թագուհի, Թագուկ, իբր Աստուածածնի եկեղեցւոյ պսակ ու գագաթ ըլլալը:

Սրբուհի, Սրբուկ, Սուրբիկ Աստուածածնի սուրբ նկարագրին հետեւողութեամբ:

Աղանի, իբր Աստուածածնի խաղաղութիւն եւ նրբութիւն ներշնչող նկարագիր:

Մարգարիտ, իբր Աստուածածնի անժամանակ, թանկագին եւ բիրեղ Արարած մը ըլլալը:

Տիրուհի, իբր Աստուածածնի հոգածու, խնամատար, պաշտպան եւ տէր կեցող Մայր մը ըլլալը:

Վարդավառ

Վարդավառը ժողովրդական այն անունն է որ կը տրուի Հայաստանեայց եկեղեցույ հինգ գլխաւոր տօներէն «Այլակերպութիւն» կոչուող տաղաւարին: Այս նոյն տօնին կը վերագրուի նաեւ երրորդ կոչում մը, որն է «Պայծառակերպութիւն»:

Պայծառակերպութեան տօնը կը վերաբերի, ամէն տնօրինական տօներու նման, Յիսուսի կեանքէն յատուկ դրուագի մը, Անոր փառաւոր ու լուսաւոր կերպով երեւնալուն իր առաքեալներէն երեքին՝ Պետրոսի, Յովհաննէսի եւ Յակոբոսի, Գալիլիոյ սուրբ լեռան վրայ: Ահա թէ ինչ ձեւով կը ներկայացուի Այլակերպութեան դրուագը Մատթէոսի աւետարանին մէջ.-

« Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղաւ: Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի.

- Տէ՛ր, Ի՜նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես, երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար:

Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր.

-Այս է իմ սիրելի Որդիս, որուն եւ հաճեցայ. անոր մտիկ ըրէք:»

Մատթէոս 17.1-6

Վարդավառի կամ Այլակերպութեան տօնի վերաբերող ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող աւանդութիւնն է ջրախաղեր կատարելու աւանդութիւնը:

«Կ'ըսուի, թէ Վարդավառի տօնակատարութեան ընթացքին մանուկները, ծերեր, այրեր ու կիներ տուններու մէջ, փողոցները, դաշտերը, գետերու ափին, աղբիւրներուն եւ առուներու մօտ կուժերով իրարու վրայ ջուր լեցնելը կամ զիրար ջուրերուն մէջ մխրճելը՝ Նոյի ժամանակներէն մնացած է Հայաստան աշխարհին մէջ»:

(Աւանդապատում)

Ուրկէ՞ կու գայ Վարդավառ բառը


Վարդավառը հին հեթանոսական ժամանակէն մնացած տօնի մը անունն է որ վարդերով զարդարուելու օր մըն էր եւ որուն «վառ» ածականը աւելցուած է իբր փայլուն եւ զարդարուն կերպարանք ստացնող տօն: Ինչպէս այլ տօներու պարագային, հեթանոսական այս տօնը իր նպատակն ու յիշատակումը փոխելով նոյնացաւ Քրիստոսի Այլակերպութեան հետ ու պահելով անոր վերաբերող եւ անցեալին կատարուող աւանդութիւնները, այսօր կը շարունակուին աղանի թոցնելու, իրար վրայ ջուր սրսկելու եւ վարդերով զարդարուելու սովորութիւնները Այլակերպութեան օրով:

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն

Աստուած նոր թագաւոր մը կ'ընտրէ

Բնաւ փորձա՞ծ ես
մէկու մը միտքը
կարդալ: Կրնա՞ս:

Ես Սամուէլն եմ,
Աստուծոյ մարգարէն:
Պիտի պատմեմ ձեզի
թէ ինչպէս օր մը
փորձեցի Աստուծոյ
միտքը կարդալ:



Բերթլեհէմի մէջ ծնաւ Յիսուս:

Այս քաղաքը նաեւ կը կոչուէր Դաւիթի քաղաք:

Հոն Աստուծոյ համար կենդանիներ կը զոհէին եւ այսպիսով


Աստուծոյ հանդէպ իրենց սէրը կ'արտայայտէին:

Օր մը Աստուած ըսաւ ինծի «Ես Սաւուղը զրկեցի Իսրայէլի թագաւորութենէն, գնա՛ Բեթլեհէմ, Յեսսէի քով, որովհետեւ անոր որդիներէն մէկը թագաւոր ընտրած եմ»: Գացի Բեթլեհէմ եւ Յեսսէն ու իր որդիները հրաւիրեցի զոհաբերութեան:

Յեսսէի մեծ որդին՝ Եղիազարը տեսնելով մտածեցի.-

«Իրաւ որ Տիրոջ ընտրած արքան այս է»:

Սակայն կը սխալէի. Աստուած ինծի յիշեցուց.- «Անոր տեսքին մի՛ նայիր, ոչ՛ ալ հասակին բարձրութեան, որովհետեւ ան իմ ընտրեալս չէ: Ես կը քննեմ սրտերը եւ ոչ թէ կերպարանքը»:



Յեսսէի բոլոր որդիները մէկ մէկ տողանցեցին Սամուէլի առջեւ, սակայն Աստուած անոնցմէ ոչ մէկը չընտրեց:

Դառնալով Յեսսէի, հարցուցի.- «Բոլոր զաւակների հո՞ս եմ»: «Փոքրիկ տղաս ոչխարները արածելու գացած է» պատասխանեց Յեսսէ:

«Մարդ դրկէ որ զինք հոս բերէ» ըսի իրեն:

Երբ Դաւիթ հասաւ մեր մօտ, Աստուած ըսաւ.-

«Ե՛լ, օձէ՛ Դաւիթը, որովհետեւ ան իմ ընտրեալս է»:

Վերցուցի իւղով լեցուն շիշը եւ Իսրայէլի թագաւոր օձեցի Դաւիթը:



**Մտածէ՛
ասոր
մասին**

Մարդ պէտք չէ տարիքի եւ տեսքի հիման վրայ դատէ դիմացիները, որովհետեւ Աստուած կը նայի մարդոց սրտերուն, առանց կարելորութիւն տալու անոր արտաքին տեսքին, եւ այդպէս կը դատէ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը


Մաչիս ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Մանկապարտէզի անկիւն

25, Բեթանիա, օրհնեց, բաժնուեցաւ, երկինք, երկրպագեցին, Երուսաղէմ, զԱստուած

Նախակրթարան Ա. Բ. Գ.անկիւն

- 1. ա. Կարմիր
- 2. ա. Բ. Ծաղկազարդ
- 3. դ. 40
- 4. ա. Հինգշաբթի
- 5. բ. Մեր մեղքերը խոստովանինք եւ ծոմ պահենք
- 6. բ. Երեւումն Սուրբ Խաչի
- 7.



Նախակրթարան Դ. Ե. Զ.անկիւն

- 1. դ. Կարմիր
- 2. 14
- 3. 14
- 4. գ. 351
- 5. ա.Յովհաննէս Օձնեցի 726 թուին
- 6. Գէորգ Ե. Սուրենեանց
- 7. Սահակ Բ. Խապայեան
- 8. Աննա
- 9. Արձակման
- 10. գործադրէք իմ պատուիրաններս Երկրորդականի անկիւն
- 1. Երեւումն Սուրբ Խաչի, Խաչվերաց, Վարագայ Սուրբ Վաչ, Գիւտ Խաչի
- 2. բ. Մարկոս եւ Ղուկաս
- 3. Քրիստոսի Սուրբ մարմինը «ճշխար»
- 4. Կէս Գիշերէն
- 5. ա. Խոնարհութիւն, բ. Եղբայրասիրութիւն, գ. Հեզութիւն, դ. Աշխատասիրութիւն, ե. Ողորմածութիւն, զ. Ժուժկալութիւն, է. Ողջախոնութիւն

- 6. Ծշմարիտ, մշակ, պտուղ
- 7. Սամուէլ
- 8. Նոյեան տապանը
- 9. ա. Մկրտութիւն, բ. Դրոշմ, գ. Ապաշխարութիւն, դ. հաղորդութիւն, ե. Պսակ կամ Ամուսնութիւն, զ. Ձեռնադրութիւն, է. Կարգ հիւանդաց կամ Վերջին Օծում
- 10. Գէորգ Ե. Սուրենեանց

Մաչիս Ամսուան Մասնակցողներ

Մանկապարտէզ

Անսխալ պատասխանողներ

Յուլեր Անթեպեան, Նշան Կիրակոսեան, Արա Միրզոյեան, Յակոբ Գեպթանեան

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Գէորգ Պուիքեան ,Արշակ Խշխշեան, Արազ Գաթթանեան, Արին Անթեպեան, Ռիթա Խշխշեան, Դանիէլ Ակրեան, Միեր Մաթոսեան, Ծեսիքա Մաթոսեան, Նարեկ Նասոյեան, Կասիա Արմութլու, Կրէյս Նարեկեան, Թամար Տեմիրճեան, Միեր Պանքեան, Կլօրիա Կարապետեան, Սերժ Դաւիթեան, Նայրա Խանօ, Կարինէ Կարապետեան, Սեւան Մելեքեան:

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Զոհրապ Կարապետեան, Ալէք Կարապետեան, Շողիկ Թեմիկեան, Արազ Գեպթանեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Դանիա Ապրապեան, Լոռի Զինչիկեան, Ռօզալին Զինչիկեան, Հրայր Մաթոսեան, Մարիա Դանիէլեան, Գրիգոր Մաթոսեան, Հրակ Նարեկեան, Սեդրակ Մամիրոյեան: Անսխալ պատասխանողներ Առէն Պապիկեան, Դալար Գեպթանեան

Երկրորդականի անկիւն

Փօլ Գիզիրեան, Կարօ Կարապետեան, Քրիստին Լոշխանեան, Յովիկ Կարապետեան, Թամար Պուիքեան, Քրիստին Կարապետեան, Անի Մելեքեան, Արի Միրզայեան, Լորա Սարիմանուկեան:

Նկարչական Մրցումին արդիւնքները

Յիսուս Քրիստոս՝ Ծաղկազարդէն Յարութիւն Թեմայով եւ հովանաւորութեամբ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի՝ Բարեշան առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, նկարչական մրցում մը կազմակերպուած էր Գանատայի Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին կողմէ գործակցութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան յանձնախումբերուն: Այս մրցումը բաց էր Մոնթրէալի, Լաւալի, Գայմպրիճի եւ Թորոնթօյի բոլոր Նախակրթարանի եւ Երկրորդականի աշակերտներուն:


Մրցումը տեղի ունեցաւ երկու հանգրուանով: Առաջինը՝ Ապրիլ 30, 2006 ին իւրաքանչիւր քաղաքի մէջ, իսկ երկրորդը Մայիս 13ին Սէյնթ Գաթրինգի մէջ համագանատական մակարդակով: Ուրախ ենք յայտարարելու թէ մեր դպրոցին նախակրթարանի աշակերտները գրաւեցին առաջին երեք տեղերը Մոնթրէալի 57 մասնակցողներուն մէջէն, եւ որոնց նուէրները տրուեցան Առաջնորդ Սրբազանին կողմէ Մայիս 21, 2006 ին Եկեղեցոյ Ս. Պատարագին ընթացքին: Իսկ մեր Երկրորդականի աշակերտները գրաւեցին առաջին երեք տեղերը Գանատայէն 11 մասնակցողներու մէջէն:

- Նախակրթարան «Մոնթրէալ»
 - Առաջին՝ Արագ Գապթանճեան «Նախ. Բ.»
 - Երկրորդ՝ Զոհրայ Կարապետեան «Նախ. Գ.»
 - Երրորդ՝ Արման Հրակ Նարեկեան «Նախ. Զ.»

- Երկրորդական Համագանատական
 - Առաջին՝ Արի Միրզայեան «Երկր. Ա»
 - Երկրորդ՝ Լորա Սարիմանուկեան «Երկր. Ա.»
 - Երրորդ՝ Քրիստին Կարապետեան «Երկր. Ա.»



Գործ՝ Արի Միրզայեանի



Գործ՝ Լորա Սարիմանուկեանի



Գործ՝ Քրիստին Կարապետեանի

Նոր Կտակարանի նամակները կը խօսին մեզի

Իր տարիքով հանդերձ, Աւետարանը «խկական եւ առօրեայ» կեանքէն անկապ գիրք մը չէ: Ընդհակառակը, ան իսկապէս գործէական եւ գործնական գիրք մըն է, որովհետեւ զայն ընթերցողին կեանքը կրնայ բարեփոխել:

Լեզուն սանձել

Եղբայրներս, ամէնքդ ալ ուրիշները սրբագրելու հետամուտ մի ըլլաք, գիտնալով որ մենք՝ ուսուցանողներս աւելի խստութեամբ պիտի դատուինք, որովհետեւ բոլորս ալ յանցանքներ ունինք:

Ան որ գիտէ իր խօսքերը կշռել, կատարեալ մարդ է, ինքզինքին իշխելու կարող: Տե՛ս, թէ ինչպէս ձիերուն բերանը սանձ կը դնենք՝ որպէսզի մեզի ենթարկուին, եւ անով ձիուն բոլոր շարժումները կը կառավարենք: Կամ դիտէ նաւերը. որքան ալ մեծ ըլլան եւ ինչպիսի զօրաւոր հովերէ ալ քշուին, փոքրիկ դէկ մը զիրենք կ'ուղղէ դէպի հոն՝ ուր նաւավարը կը փափաքի տանիլ: Նոյնպէս ալ լեզուն. թէեւ փոքր անդամ մըն է, բայց մեծամեծ բաներով կը պարծենայ: Գիտէք, թէ պզտիկ կայծը հսկայ անտառ մը կրնայ հրդեհել: Լեզուն ալ կրակ է: Անհրաւրութեան աշխարհ մըն է անիկա: Թէեւ պարզ մէկ անդամ է մամիկին, բայց ամբողջ մարդը կ'ապականէ, եւ գեհեհի կրակով բռնկած՝ մեր ամբողջ կեանքը կրակով կը վառէ:

Բոլոր տեսակի գազանները, թռչունները, սողունները եւ ծովային կենդանիները նուաճուած են մարդուն կողմէ եւ կը հնազանդին անոր: Բայց ոչ ոք կրնայ հնազանդեցնել մարդկային լեզուն, որ չար է, անզսպելի եւ մահացու թղնով լեցուն: Անով կ'օրհնենք մեր Տէրը եւ Հայրն Աստուած, եւ դարձեալ անով կ'անիծենք մարդիկը, որոնք Աստուծոյ նմանութեամբ ստեղծուած են: Այսինքն՝ նոյն բերանէն կ'լլեն թէ օրհնութիւնը եւ թէ անէծքը: Ասիկա ճիշդ չէ սակայն, եղբայրներս: Միթէ աղբիւր մը միեւնոյն ակէն քաղցր եւ դառն ջուր կը բղխէ: Կարելի՞ բան է, եղբայրներս, որ թզեհին ձիթապտուղ Տայ կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս կարելի չէ որ աղուտ հողէն քաղցր ջուր բղխի:

Յակոբոս 3.1-12

Լուծում Մայիս ամսուան «Եզակի Գիրեր» ուն

է	զ	ը	բ	գ	ա	թ	դ	ե
ե	ա	գ	դ	զ	թ	ը	բ	է
թ	դ	բ	ը	ե	է	զ	ա	գ
դ	բ	ե	գ	է	զ	ա	թ	ը
զ	թ	է	ա	ը	դ	ե	գ	բ
գ	ը	ա	ե	թ	բ	է	զ	դ
բ	ե	դ	զ	ա	ը	գ	է	թ
ը	է	զ	թ	բ	գ	դ	ե	ա
ա	գ	թ	է	դ	ե	բ	ը	զ

Ո	Ս	Ե	Պ	Ր	Տ
Տ	Ր	Պ	Ո	Ս	Ե
Պ	Ե	Տ	Ր	Ո	Ս
Ր	Ո	Ս	Ե	Տ	Պ
Ե	Տ	Ո	Ս	Պ	Ր
Ս	Պ	Ր	Տ	Ե	Ո

Ղ	Ո	Ի	Կ	Ա	Ս
Ա	Ս	Կ	Ղ	Ո	Ի
Ս	Ա	Ղ	Ի	Կ	Ո
Ի	Կ	Ո	Ա	Ս	Ղ
Ո	Ի	Ա	Ս	Ղ	Կ
Կ	Ղ	Ս	Ո	Ի	Ա

Լուծում Նախորդ «Եզակի Գիրեր» ուն

Պետրոս ուրացաւ Յիսուսը

Ղուկաս Բժիշկ էր

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ ԺԳ. Տարի

Խմբագրական Կազմ

Խմբագիր՝	Ծաղիկ Պոյաճեան
Աշխատակիցներ՝	Յասմիկ Նաճարեան
	Գարոլ Մանուկեան
	Երան Լոշխաճեան
	Ծողիկ Նաճարեան
	Թամար Գիզիրեան
	Նիկոլ Դանիէլեան
	Թորոս Պապիկեան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք

www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն

«Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

«Ճաշու Աւետարանը»

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու Աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը.-

Ուսուցիչներ՝ Վերժին Գէպթանճեան, Սալբի Բակլաեան, Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Վերա Կարապետեան, Գարոլիկ Մանուկեան, Թամար Գիզիրեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյաճեան: